ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԼՈՒՍԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ, (0234) 6-11-20, (0234) 6-11-30; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2012թվականի N 22-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ի կատարումն «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին՝ *որոշում է.*

Լուսառատ համայնքի տարածքում սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա - շինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հիմնական օբյեկտների համար.
ա/ մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար – 10000 դրամ
բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար
բա/ 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ
բբ/ 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար- 25000 դրամ
բգ/ 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար- 40000 դրամ
Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
գ/ մինրև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 1500 դրամ
դ/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար – 2500 դրամ
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության համար – 2000 դրամ

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում նաև ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափերի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

- նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը:

0.5 գործակիցը կիրառված է:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել – 2000 դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է
ա/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար – 2000 դրամ
բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար – 2 000 դրամ.

գ/ Հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար ընթացիկ տարվա տեղական տուրք սահմանել 50000 դրամ.
դ/ Խանութներում , կրպակներում, տեխնիկական հեղուկների վաճառքում թույլտվության համար ընթացիկ տարվա տեղական տուրք սահմանել 10000 դրամ:

5. Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները (սաունաները), զվարճանքի օբյեկտները ժամը 24^{00} -ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է.
ա/ առևտրի օբյեկտների համար – 25 000 դրամ
բ/ շահումներով խաղեր կազմակերպելու համար – 250 000 դրամ
գ/ բաղնիքների (սաունաների) համար - 200 000 դրամ
դ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 25 000 դրամ

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովաղդ տեղադրելու թույլտվության համար 1 քմ – ի տեղական տուրքը սահմանել.
ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար – 2000 դրամ

բ/ թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար -2500 դրամ
գ/ այլ արտաքին գովազդի համար 1500 դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 500 դրամ:

8. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող
- հողերի մրցույթ կազմակերպելու դեպքում մասնակիցներից վճար – 500 դրամ
- հողերը օտարելու, աճուրդներ կազմակերպելու դեպքում մասնակիցներից վճար – 5000 դրամ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԵՈՐԳ
3. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՈՍԿԱՆ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ
7. ՔԵՇԻՇՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ